




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՐՈՋԷ ԿԱԹՈՂԻԿՆԵ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆՆԻ ՏՈՆԻ ԱՌՔԻՎ

(Կիրակի, 25 հունիսի 1957 թ.)

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Եւ սա՛կ Աստուած. «Հեղից յՈգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէացին ուստե՛րք ձե՛ր և դասե՛րք ձե՛ր. և ձե՛րք ձե՛ր երազով երազեցին, և երիտասարդք ձե՛ր տեսիլս տեսցեն: ... Եւ տաց ճշանս յերկինս ի վեր և ճշանս յերկիր ի խոնարհ՝ արիւն և հուր և մերիկ ծխոյ»:

(ՅՈՒՆԷ, Բ 28, 30).

«Տեղիդ այդ լիցի Տաճար Աստուծոյ և Տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, և Արքո Քահանայապետութեան»:

Այսպէ՛ս խոսեցավ Աստված «Երանելի Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի»:

«Եւ յոյս հոսեալ ի վերուստ ի վայր, մինչև յերկիր հասանէր»:

Եվ ահա Ինքը Միածինը, «ի ձեռին իւրում ունեւ մի մեծ ոսկի», «սլացեալ խոյացեալ գայր, ըստ նմանութեան արագաթև արծուոյ. և եկն էջ եհա՛ս մինչև մօտ ի յատակս երկրիս, ի շինամէջ քաղաքին և քաղխեաց զքանձուրսն լայնատարած գետնոյն»:

Եվ «Կանգնեցաւ սիւնն հրեղէն՝ Կարողիկէ Եկեղեցի. որ ժողովէ զամենայն ժողովուրդն ի միաբանութիւն հաւատոց ի ներքոյ քեց իւրոց»:

Սիրելի՛ հավատացյալ հայ ժողովուրդ, տասնևվեց փոքրկալից դարերու խորհեն կհառնեն այսօր մեր հոգիներու մեջ՝ սքանչելի հրաշք տեսիլքը Ս. Գրիգոր Լուսավորչի:

Երա՛գ և իրականորայն դարերու հետ կհյուսվին, երա՛գ և իրականուրայն դարերու հետ կքարձրանան, և դարերու ծնունդ կուտան՝ հայոց հավատի փառքը երգելով:

Այս հավատքի փառքով լուսավորված, մենք կանք ահա այստեղ, տոնելու համար մեր սրտերու Տաճար Ս. Էջմիածինը: Ա՛յս է, սիրելի՛ք, Տաճարը Աստուծո և Տունը աղօթքի՝ համայն հայ հավատացյալներուն, և Արքոյն ամենայն հայոց Քահանայապետութեան:

Այսօր Տերը և Փրկիչը մեր՝ Միածին Որդին Աստուծո, խորհուրդներու աշխարհի մը բարձունքներեն, Իր կենարար հայացքը կողոզե դեպի Ի՛ր իսկ հիմնած այս Ս. Տաճարը և աշխարհը Հայաստանայց:

Այսօր, մեր բոլոր սուրբերը, հայոց պատմության ոգիով կյանք առած, մեզ հետ ծննդաբեր, կաթոսեն անձայն և իշման հրաշքին փա՛նքը կօրհներգեն:

Այսօր, Մեր բոլոր զավակները հավատացյալ, ուր որ ալ գտնվին անոնք աշխարհի համբարներուն վրա, իրենց եկեղեցիներու կամարներուն ներքև, իշման տեսիլքը կտեսնեն, էջմիածինը կերագեն և իրենց երազով ոսկի՝ կմիանան մեզի:

Եկե՛ք, հարազատեն՛ր Մեր, բոլոր ծագերեն, եկե՛ք, մոտեցե՛ք, երկրպագեցե՛ք իշման հրաշքին՝ այս Ս. Սեղանին առաջ, քանզի հրաշակերտված այս հրա՛շք Տաճարով, ժողովուրդը մեր հրաշքով ապրեցավ դարեր ու դարեր...

Ա՛յս է հրաշքը հայոց հավատքին:

Հայաստանայց Առաքելական Ս. եկեղեցին այսօր կտոնե իր Մայր Աթոռ Կաթողիկոս Ս. էջմիածնի հիմնադրության տարեդարձը: Հազար վեց հարյուր հիսուն և չորս տարիներ անցած են այն սուրբ օրերեն, երբ հայ ժողովուրդը վերածնավ Միածնի իշման լույսի փայլատակումով: Քրիստոսի սիրով արգասավորվեցավ հայ հոգին և բացվեցավ նշմարիտ գիրքը հայոց պատմության: Ու մեկ դար շանցած, Ս. էջմիածինը դարձավ ամրակուտ բերդ մը հավատքի. ան կազմակերպեց Հայաստանայց Ս. եկեղեցին, միավորեց հայուն հոգին, ներքին ուժ և իմաստ տվավ անոր, անխախտ ու ապահով նեցուկ եղավ հայ պետության և դրոշակիրը Մայր երկրի անկախության: Եվ ուրիշ հրաշքով մը, Ս. Մեսրոպի ձեռամբ, ան տվավ մեր ժողովրդին գիր ու դպրություն, և Ս. Գրքի քարգմանությամբ՝ հիմք դրավ հայ մատենագրության:

Ս. էջմիածինը վառեց կրակը հայ մշակույթին:

Հայ ժողովուրդը ծնավ ու ապրեցավ, կապրի ու պիտի ապրի՝ լուսաշող ծիածանումովը Գրիգոր և Մեսրոպ սուրբ լուսավորիչներու երկնառաք տեսիլներուն: Այդ տեսիլներով Ս. էջմիածինը «եղիցի լոյս»-ն է հայոց պատմության:

Ս. էջմիածինը անոնց լույսերով դարեր շարունակ կերտեց Եդեսի մեր Ազգի մտքին, հոգիին:

Հայ ժողովուրդը բերևս միակ ժողովուրդն է, որ իր իսկությունը գտավ, ինքզինքը իրականացուց և իր առավելագույնը տվավ՝ Քրիստոսի սիրո նոր աշխարհին մեջ:

Հեյլենները անմահացան իրենց փառապանծ Պերիկլեսյան դարով, Քրիստոսն հինգ դարեր առաջ. ուրիշ ժողովուրդներ իրենց վերածնունդը կերտեցին Քրիստոսն բազում դարեր վերջ:

Հայոց մեջ, սակայն, ոսկյա վերածնունդը՝ սփանչելի հանդիպումը եղավ մարդու և Աստուծո միատեղ ծնունդին:

Քրիստոնեությունը իջավ հրեղեն շաղախի մը նման հայ ժողովրդի նոր բնձյուղող հոգիին վրա, ճիշտ այն պահուն, երբ այդ հոգին, տակավին փափուկ կաղապարներու մեջ՝ իր ձևը կորցրեց...

Ս. էջմիածինը այն մայր հեռոքը եղավ, ուր դարբնվեցան անհատ ձևերը հայոց հանճարին և այն զանճարանը, ուր մեկտեղվեցան այդ հանճարի գահարները լույս:

Ս. էջմիածինը մեր Սինա լե՛ռն է, մեր Ակրոպոլիս, մեր Ս. Պետրոս՝

Էջմիածինը սակայն անցյալ չէ միայն. ան է նաև ներկա և մեր ապագան: Կենդանի է ան ու մշտանորոգ: Ս. Էջմիածինը միշտ կրաշխվի ու չի նվազիր. ինչքան բաշխվի, այնքան կշատանա, ինչքան լույս սփռե՝ այնքան կշողա: Դարերը կուգան, դարերը կանցնեն, ան կբարձրանա, կլուսավորե ու կներշնչե միշտ. կյա՛նք տալով՝ կապրի...

Մովեր, օվկիաններ կամ օտար ձեռքեր կրնան մեզ բաժնել, բայց Էջմիածինը միշտ մոտ է մեզի: Եվ ինչքան հեռու, այնքան մերձ է ան, այնքան կդառնա խորհուրդ և հրաշք, երազ և իսկություն, հույս և ստուգություն:

Եվ անհա մենք, այսօրվաններս, կանգնած աստվածակառույց այս Ս. Տաճարի սալերուն վրա, հափշտակված կղիտենք՝ մեր նախնայաց հավատքի ու սիրո լույսերով հորինված կամարներն այս սուրբ: Մեր հոգիներու բոլոր լարերով կհայինք այս հազարամյա ծանր փառերուն, կշնչենք խորունկ՝ մթնոլորտին մեջ այս խորհուրդներով լեցուն: Անխմանալի սարսուռ մը փաղր և այրող, կփոքորկե մեր էությունը ամբողջ և կփոխադրվինք տարբեր աշխարհ մը՝ խոր իմաստներու, իրավ արժեքներու, անկորնչելի գեղեցկություններու:

Ս. Էջմիածնի սիրովը վառված, կանք անհա այստեղ, ու կը մնանք այսպես:

«Հերբը մի պահ մերն է հիմա», — պիտի ըսեր մեծ բանաստեղծը: Եվ անցնելն առաջ այս անցավոր կյանքի հովիտեն, կուգենք փար մը ևս ավելցնել այս բազմադարյան փառերուն վրա: Կուգենք տող մը ևս շարել մեր երկարագիր մագաղաթներուն մեջ և պուտ մը լույս ևս կաթեցնել կուգենք Ս. Լուսավորչի անմար կանթեղին մեջ: Մենք ներկա ենք այստեղ մեր ժողովրդի կյանքին, սրտին մեջ, Արարատի փեշերուն, Իջման վեմին վրա: Եվ նոր կյանք առած՝ կապրի Էջմիածինը մեր հոգիներեն ներս: Ան կխոկա և կորոնե, ան կգործե, և միշտ կհուսա և լուռ կաղոթե...

Արդ, հա՛յ ժողովուրդ, «Զգոյ՛ջ լեր ասանդիդ, որ ֆեղդ հաւատացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ»: Մնացի՛ր հավատարիմ քու սուրբ հավատքիդ. քու մայրենի փաղրաբան լեզվիդ, քու սրբություններուդ, քու մշակույթիդ լույս արժեքներուն, վերածնած քու Մայր Հայրենիքիդ և ամենասուրբ Ս. Էջմիածնիդ:

Լուսավորված և զորությամբ լեցված՝ Փրկչի իջման խորհրդով և Օջականի Մեծ Սուրբին լույսով, այսօր մենք բոլորս, բոլորս անխտիր, որ հայ անունը կկրենք արդար պարծանքով՝ Մայր Հայրենիքեն ներս, քե ի սփյուռս աշխարհի ցրված բեկորներ, ուխտենք շենցնել, ուխտենք ծաղկեցնել և փառավորել՝ մեր հավերժության կենդանի վկան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ամենայն հայոց:

«Եղիցի, եղիցի և եղիցի»:

Եվ ամուր է Մեր համոզումը, քե այս ուխտը՝ իրավ ապրումն է համայն հայ ժողովրդին: Չկա ճշմարիտ հայ, որ չդավանի Ս. Էջմիածինը. չկա ճշմարիտ հայ, որ բաժանված ըլլա իր Մայր Աթոռեն: Ս. Էջմիածնեն բաժանված չենք նկատեր Մենք հայ աղետարանական հարազատներ Մեր, և ոչ իսկ անոնք, որոնք իրենց անունը կապած են Հռոմին:

Իսկ անդին, Անթիլիասի ափերուն, եթե դեպի անջատում, դեպի հերձույթ ընթացողներ կան, միշտ հուսով ենք Մենք, քե կվերադառնան Հայ եկեղեցվո սիրո միության մեջ, Կիլիկյան Աթոռի օրինապահ միաբանության և ժողովրդյան կողմին, ընդհանուր հաշտությամբ:

Ամեն բանե վեր, Ս. Էջմիածինը կմիացնե զմեզ բոլորս՝ երեկ և այսօր, միշտ և հավիտյան:

Սիրելի՛ ժողովուրդ, հայտնի է բոլորիդ, մանավանդ ձեզ՝ հայաստանցիներ, թե մեր օրերուն Ս. էջմիածինը նոր կյանքի սեմին՝ կգտնվի լուսավոր հորիզոնի առաջ: Ահա բարի են ժամանակները և՛ հուսադրիչ՝ բոլոր նշանները: Մեր կուլ-
ֆին է մեր ժողովուրդը, Մեզ նեցուկ է մեր՝ Հայրենի պետությունը, Մեզ օգնու-
րյան ձեռք կերկարեն Սփյուռքի Մեր հարազատ զավակները: Կզգանք, կտես-
նենք, թե բարի է այդ ձեռքը և առատաբաշխ:

Եվ այս օրերուն մեր կյանքի ճամբան առավել կպայծառանա՝ հավետ ան-
մոռաց երջանկահիշատակ Գալուստ Կյուպենկյանի բողած ավանդի կենսա-
գործումով:

Թող աշխարհ գիտնա, թե Մեծ Բարերարի հոգվո պարգևով, հիմնովին
և ամբողջապես պիտի վերաշինվի՝ բազմադարյան այս Ս. Արո՛ղը իր բոլոր
ուրբավայրերով, իր բոլոր հաստատություններով:

Քրիստոնեության սյո՛ւն Ս. էջմիածնի վերաշինությունը Մեր կյանքի նպա-
տակն իսկ է:

Երազը անգամ մը ևս իրականություն կդառնա:

Ո՛վ հոգևոր Մայր մեր՝ Դուն Ս. էջմիածին, այսօր, այս սուրբ աղոթքի պա-
հուն, երբ Քեզ կերգենք, կփառավորենք սիրով անարատ, մենք՝ զավակներդ
և ծառաներդ, հավատով լեցուն, անգամ մըն ալ կովստենք Քեզ պայծառաց-
նել, Քեզ ծաղիկ դարձնել, Քեզ ուրախացնել, որպեսզի Քեզմով Աստված ընդ
մեզ մեա և մենք՝ ընդ Աստուծո:

«Պարծա՛նք զօրութանց մերոց Դո՛ւ ևս և ի կամս Քո՛ւ բա՛րձր եղիցի եղ-
ջիւր մեր» (Սաղմ. ԶԸ, 18):

Արդ, Ազգ Մեր սիրելի՛, ժողովու՛րդ հայոց, «Եկայք շինեսցուք սուրբ զխո-
րանք լուսոյ, Բանգի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Ողջո՛ւյն և մաղրա՛նք և բյո՛ւր օրհնություն ձեզ բոլորիդ, հարազատներ
Մեր, Միածնաէջ Մայր Տաճարեն ամենայն հայոց:

«Շնորհք և զօրութիւն Միածնի Որդւոյն Աստուծոյ մերոյ եղիցին ընդ ձեզ:
Ամէն»:

